Ալեքսանդր Շիրվանզադե

Զուր հույսեր

X - XI

X

Առավոտյան Մարիամը զարթնեց սովորականից ուշ: Նա ավելի գունատվել էր, նրա աչքերի տակը մի քիչ կապտած էին, կոպերը ուռած:

Ո՞ւշ ես քնել գիշերը, հարցրեց Ռուբենը:

Այո:

Ինչո՞ ւ:

Կարդում էի:

Ռուբենը զգաց, որ Մարիամը ստում է, որ նա գիշերը անքուն է անցկացրել, և գիտեր, որ այդ առաջին անքնությունը չէր: Ի՞նչ աներ, ինչո՞վ ամոքեր նրա վիրավորված սիրտը: Խոսե՞լ Մելիք-Բարսեղյանի հետ, բացատրությո՞ւն պահանջել: Բայց արդյոք Մարիամը կտա՞ նրան իրավունք այդ մասին որևէ խոսք բանալու բժշկի հետ: Ոչ երբեք. նրա խորին ինքնասիրությունը բնավ չի թույլ տալ այդ:

Սիրո փորձությունները տակավին չճաշակած երիտասարդը հարկավ, չէր կարող լիովին կշռել հագուրդ չստացած սրտի դառնության չափը: Բայց նա սիրում էր Մարիամին եղբայրական անձնվեր, անսահման սիրով, և այսքանը

բավական էր, որ քրոջ ամենաթեթև վիշտն անգամ սուր արձագանք գտներ նրա զգայուն սրտում:

«Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ», կրկնում էր նա մտքում ամեն անգամ, լսելով քրոջ լուռ, ծանր և սիրտ թափանցող հառաչանքները:

Այնինչ օր-օրի վրա էր անցնում: Մելիք-Բարսեղյանը դարձյալ չէր երևում, Ռուբենը երբեմն պատահում էր նրան փողոցում, բարևում էր և անցնում: Նա չէր կամենում մոտենալ բժշկին, գիտեր, որ սառնարյուն չի կարող նրա հետ խոսել, գիտեր, որ կամա թե ակամա պետք է արտահայտե նրա մոտ յուր սրտի ատելությունը: Մի բան, որ նա տակավին չէր ուզում ցույց տալ:

Իսկ Մարիա՛մը. որքան ուզում էր չմտածել, որքան ուզում էր յուր վիշտը եթե ոչ մոռանալ, գեթ փոքր-ինչ մեղմացնել տնային գործերով և կարուձևի պարապմունքով, այնքան ավելի համառությամբ էին հալածում նրան անցյալ երջանկության հիշատակները:

Հոգյակս, դու հիվա՞նդ ես, հարցրեց մի անգամ կարուձևի վարժուհին, որ վաղուց արդեն նկատել էր յուր ընկերուհու խորին թախիծը:

Ինչի՞ց ես եզրակացնում, որ հիվանդ եմ:

Նրանից, որ դու ուշադրությունով չես աշխատում, որ ես քեզ բան եմ բացատրում, չես լսում, միշտ միտքդ ուրիշ տեղ է: Այո, դու հիվանդ ես, բայց չգիտեմ ի՛նչ է հիվանդությունդ:

Մարիամի կրծքից ակամա մի հառաչանք դուրս թռավ և նա գլուխը թեքեց կրծքին տխուր ու տրտում:

Ես տեսնում եմ, հոգիս, որ դու մի վիշտ ունես, խոսեց դարձյալ վարժուհին և, ձեռը դնելով նրա ուսի վրա, շարունակեց. ամոթ չէ՞, որ ինձանից թաքցնում ես: Մոռացե՞լ ես մեր ընկերական սերը: Ասա՛, հոգիս, պատմի՛ր, ով գիտե, կարելի է մի բանով կարող եմ օգնել քեզ: Ի՞նչ, դու, կարծես, ուզում ես արտասվել, հաա՜, այժմ համոզված եմ, որ քո վիշտը աղքատությունը չէ, մինչև որ չպատմես, ձեռք չեմ քաշի քեզանից: Մարո, սիրելի Մարո, հայտնի՛ր սրտիդ ցավը քեզ սիրող

ընկերուհուդ: Էէէ, այդ չեղավ, դու փոխանակ խոսելու, լաց ես լինում...

Եվ իրավ Մարիամը չկարողացավ զսպել յուր արտասուքը: Ընկերուհու անկեղծ կարեկցությունը շարժեց նրա սիրտը: Նա, զգացված, ձեռները փաթաթեց վարժուհու պարանոցին, գլուխը դրեց նրա ուսի վրա և սկսեց հեկեկալ: Անցան առաջին վայրկյանները, նրա սիրտը փոքր-ինչ հանդարտվեց: Նա արտասուքը սրբեց, նայեց ընկերուհու աչքերին և այլևս չկարողացավ թաքցնել այն, ինչ որ վաղուց մի հոգեկան պահանջ էր զգում պատմելու մի մտերիմ կնոջ և, ինչ որ ինքնասիրությունը մինչև այդ րոպե չէր թողնում պատմելու: Ոչ մի խոսքով, ոչ մի թույլ ակնարկով նա դժգոհություն չհայտնեց Մելիք-Բարսեղյանի դեմ: Նա բոլոր մեղադրանքը բարդեց յուր վրա, որ այնպես մոռացավ ինքն իրան, որ այնպես հափշտակվեց, և ահա այսօր այդքան տանջվում է:

Գիտես ինչ, սիրելիս, ասաց վարժուհին խորին կարեկցությամբ, լսելով ընկերուհու համառոտ պատմությունը, ես ինքս թեև չեմ սիրահարվել մինչև օրս, բայց զգում եմ քո դրությունդ:

Երանի քեզ, երանի, որ չես սիրահարվել, գոչեց Մարիամը դողդոջուն ձայնով, ա՛խ, որքա՜ն նախանձում եմ քեզ:

Նո՛ւ, նախանձելու բան, ասենք, չկա, ո՞վ էր ինձ սիրողը, որ ես էլ նրան սիրեի: Իմ տգեղությունը ինձ ազատ է պահում այդ տեսակ փորձանքներից:

Վերջին խոսքերը արտասանելիս վարժուհին, զսպելով յուր հառաչանքը, ծիծաղեց, յուր ընկերուհուն զվարճացնելու համար: Իսկապես նա արդարացի չէր յուր վերաբերմամբ. նա այնքան էլ տգեղ չէր, որքան վատաբանում էր ինքն իրան: Հասակով Մարիամից քիչ ցածր, դեմքով գուցե ավելի գեղեցիկ էր, եթե անգութ ծաղիկը տասը տարի առաջ այդ գեղեցկությունը հավիտյան արատավորած չլիներ յուր խոշոր հետքերով:

Հանգստացիր սիրելիս, մխիթարում էր նա Մարիամին մայրական քնքշությամբ: Պառավների խոսքով ասած, գրողը տանի այդ տղամարդերին: Արժե՞ նրանց համար այդպես տանջվել, այն էլ քեզ նման սիրուն աղջկան: Ո՞ւմ վրա ուշադրություն դարձնես, որ քեզ համար չի գժվի: Եթե ինձ հարցնես, ես կասեմ՝

թող իսկի ոչ ոք էլ չսիրի քեզ: Չե՞ս կարող առանց տղամարդի ապրել: Աստված վկա, կարող ես: Ինչո՞ւ ես ապրում եմ, և վճռել եմ ապրել մինչև մահ: Գիտե՞ս ինչից է, որ դու այդքան տանջվում ես, որովհետև զրաղմունք չես ունեցել մինչև օրս: Հապա, ինձ նման սիրիր աշխատանքը, տես կմոռանաս, թե չէ:

Սովորեցրու ինձ, սովորեցրու մոռանալ, Սաթենիկ, և ես կմոռանամ, արտասանեց Մարիամը հուզված, նայելով ընկերուհու աչքերին և նախանձով նրանց մեջ փայլող հոգեկան մխիթարիչ անդորրությանը:

Աչքիս վրա, բարեհաճիր նստել բանիդ: Մարո, հավատացիր, աշխատանքից ավելի սիրելի բան չկա, մանավանդ երբ տեսնում ես աշխատանքիդ պտուղները: Տե՛ս, այդ կոպտացած մատներս իմ սրտի ամենամեծ մխիթարիչներն են: Արի վաղը առավոտյան ինձ մոտ, տանեմ քեզ իմ ուսումնարան, դու կտեսնես այնտեղ իմ խոսքերի ճշմարտությունը: Տես, այնտեղ իմ փոքրիկ աշակերտուհիները ի՛նչպես են բանում, ի՛նչպես են աշխատում: Անկեղծ եմ ասում, երբ նայում եմ նրանց, երբ տեսնում եմ, թե ինչպես նրանց փոքրիկ ձեռները օրեցօր ավելի ու ավելի վարժվում են, մի հպարտություն եմ զգում, եռանդս ավելանում է: «Ահա իմ աշխատանքի պտուղը, ասում եմ ինքս ինձ, այդ աղջիկները, այդ աղքատ ընտանիքների զավակները արհեստ են սովորում ինձանից: Նրանցից ամեն մեկը ժամանակին կարող է յուր գլուխը պահել, ով գիտե, ծնողներին էլ պահել յուր ձեռքի աշխատանքով, ինչպես ես այժմ պահում եմ ինձ և երկու փոքրիկ քույրերիս»: Մարո, երկու տարի շարունակ արտասահմանում ես լսել եմ իմ ուսուցիչներից. «սիրիր աշխատանքը, սիրիր, և դու միշտ բախտավոր կլինես»: Այժմ տեսնում եմ, թե որքան ճշմարիտ էին այդ խոսքերը: Այո, աշխատանքը կարող է մարդուս բախտավորեցնել:

Երանի թե ես էլ քո ճանապարհով գնացած լինեի, ասաց Մարիամը, հառաչելով: Դու քո բախտը խելքով ապահովեցիր, ես իմը թողի սրտիս կամքին:

Չէիր կարող ուրիշ կերպ անել, հոգիս: Իմ ճանապարհով գնալու համար հարկավոր էր, որ դու ոչ գեղեցիկ լինեիր, ոչ հարուստ: Հարստությունը և գեղեցկությունը ծուլացնում են մարդուն: Հիշո՞ւմ ես, ինչպես ես ցավեցի, ինչքան հառաչեցի առաջին անգամ, երբ լսեցի, որ քեզ զրկել են ժառանգությունից: Ես ցավում էի անկեղծ, որովհետև կարծում էի, որ հարստությունը քեզ համար կյանք

է դարձել, որ առանց նրան դու դժբախտ ես: Բայց երբ դու հաստատ մտքով ինձ ասացիր, թե ուզում ես հասարակ արհեստավոր դառնալ, ուրախացա: Ես տեսա, որ հարստությունը քեզ չի փչացրել: Այժմ ես ուրախ եմ, որ դու զրկվել ես քո օժիտից, բայց աստված ոչ անի, զրկվես քո մյուս օժիտից գեղեցկությունից: Պահպանիր գեղեցկությունդ, պահպանիր և օրինակ դարձիր մյուսների համար, թե գեղեցիկ կինն էլ պիտի աշխատի, թե կնոջ զարդը միայն գեղեցկությունը չէ, ինչպես կարծում են թեթևամիտ մարդիկ: Գիտե՞ս, ինձ շատերն են ասել, թե եթե ես տգեղ չլինեի, արհեստ չէի սովորիլ, կմտածեի միայն մարդու գնալու մասին: Չգիտեմ, բայց կարծում եմ, որ սխալվում են...

Այստեղ Սաթենիկը լռեց և խաղաղ ժպտաց Մարիամի երեսին: Եվ նրա ժպիտը արտահայտեց մի տեսակ մելամաղձություն. արդյո՞ք դա նրա անվերադարձնելի կերպով կորցրած գեղեցկության հիշատակը չէր: Արագությամբ հետ դարձնելով յուր խոհուն ճակատի վրա սփռված սև գանգուր մազերը, վարժուհին, կարծես, այդպիսով վանեց յուր թախիծը և ավելի ոգևորված շարունակեց գովել աշխատանքը:

Մարիամը լսում էր նրան սիրով և հաճությամբ, նրա յուրաքանչյուր խոսքի մեջ որոնելով մի-մի սփոփանք յուր վշտացած սրտի համար:

Նա տուն վերադարձավ այդ օրը սովորականից ուշ: Երկար ժամանակ Սաթենիկի խոսքերը հնչում էին նրա ականջում: Սակայն վրա հասավ երեկոյան խավարը, և նա կրկին անձնատուր եղավ յուր սովորական անհաղթելի վշտերին: Արդեն հոկտեմբերի վերջն էր, աշնան խոնավությանը տեղի էր տալիս մոտալուտ ձմեռվա ցրտերին:

Ռուբենի համար ավելի ու ավելի զգալի էր դառնում նյութական պակասությունը: Հարկավոր էին մի քանի նախապատրաստություններ ձմեռվա համար, իսկ ամսական ռոճիկը նրանց առօրյա պիտույքներն անգամ չէր լրացնում: Ռուբենը մասնավոր դասեր էր որոնում, բայց անհաջո՛ղ, տարվա միջոցը անհարմար էր, ամենքը խոստանում էին ամառվա սկզբին: Եվ մի կողմից նյութականը, մյուս կողմից քրոջ բարոյական դրությունը, օրից-օր կրկնապատկում էին երիտասարդի հոգացողությունը: Նա տեսնում էր, որ այդպես թողնել Մարիամին չի կարելի, որ մի կերպ պետք է վերջ դնել նրա վշտին:

Մարո, ասաց նա մի օր ճաշից հետո, արի այս երեկո թատրոն գնանք: Մարիամը նախ զարմացավ, ապա նայեցով եղբոր աչքերին, գուշակեց նրա միտքը և կատակի ձևով պատասխանեց:

Գնանք, երևի փող շատ ունես գրպանումդ:

Ունեմ, ունեմ, այսօր ռոճիկս ստացել եմ: Այսուհետև ավելի կունենամ, խոստացել են դասերս ավելացնել: Բացի դրանից, անպատճառ մասնավոր դասեր էլ կգտնեմ: Շուտով, շուտով մենք կապահովվենք նյութապես, ավելացրեց նա շինծու ոգևորությամբ:

Լավ, երբ կհարստանաս, այն ժամանակ զվարճության մասին էլ կմտածենք: Իսկ այժմ իրավունք չունենք:

Իրավո՛ւնք, գոչեց Ռուբենը, ո՞վ է այդ իրավունքը մեզանից խլում: Մարո, խնդրում եմ, աշխարհից բոլորովին մի կտրվիլ: Լավ չէ, քեզ համար մի քիչ զվարճություն անհրաժեշտ է: Նայիր հայելիի մեջ, տանը փակված մնալով, տես ինչպես փոխվել ես:

Եվ նա շարունակեց համոզել: Շռայլություն չէ ամսական գոնե մի երկու անգամ մի տեղ գնալը: Ով աշխատում է, նա իրավունք ունե և՛ զվարճանալու: Ինչո՞ւ փախչել հասարակությունից: Նրա համար, որ առաջ հարուստ էին համարվում, այժմ աղքա՞տ են:

Եթե այդ է պատճառը, նախապաշարմունք է, սիրելի Մարո: Աղքատությունը ամոթ բան չէ, ամոթ է աղքատությունից ամաչելը: Ոչ ոք իրավունք չունի մեզ ծաղրելու: Իսկ եթե ծաղրողներ լինեն, միթե չե՞ս կարող այդպիսիներին արհամարհել:

Նա շատ լավ գիտեր, որ Մարիամի հասարակությունից փախուստ տալու պատճառը աղքատության զգացումը չէ, բայց շեշտելով այդ հանգամանքը, կամենում էր կպչել նրա ինքնասիրությանը: Գիտեր, որ միայն այդպիսով կարող էր համոզել քրոջը:

Ես ոչ ոքից չեմ քաշվում մեր աղքատության պատճառով, պատասխանեց Մարիամը զգացված, խնդրում եմ այդ մասին այսուհետև չխոսես:

Որ այդպես է, թատրոն չենք գնալ, այլ մի ուրիշ տեղ: Վաղը երեկոյան հայոց բալն է, ես շատ եմ ցանկանում մի անգամ մի տեղ տեսնել այստեղի հասարակությանը: Գնա՛նք վաղը միասին:

Մարիամը գլուխը թեքեց կրծքին: Նրա հոնքերը սեղմվեցին, ճակատը դարձյալ պատեց տխրության քողով: Հիշեց նա, որ այդ երեկույթի կարգադրիչը Նատալիան է լինելու: Գնա՞լ այնտեղ, ուր այդ գոռոզ արարածը, նրա անհաշտ հակառակորդը, յուր փքված մոր հետ պիտի փայլեն. ոչ, ոչ, նա չի կարող: Սակայն նույն վայրկյանին նրա գլխում զարթնեց մի այլ միտք: Անշուշտ Մելիք-Բարսեղյանը այնտեղ կլինի, անշուշտ նա չի արհամարհիլ մի այդպիսի հանդիսավոր երեկույթ: Ի՞նչ կանի բժիշկը այդ երեկո, ո՞ւմ հետ կխոսի, ո՞ւմ հետ կզբոսնի, կամ գուցե կպարի: Եվ զգում էր նա, որ չի կարողանում դիմանալ յուր սրտի ձգտմանը, որ հակառակ յուր կամքի, հիվանդոտ հետաքրքրքրությունը մղում է նրան դեպի այնտեղ, ուր պետք է լիներ բժիշկը: Այո, պետք է գնալ, պետք է տեսնել նրան: Այդ երեկո վերջապես կվճռվի նրա բախտի խնդիրը: Հասարակության մեջ մի թեթև վարմունք, մի որոշ շարժմունք անգամ կարող է դրականապես պարզել բժշկի հոգին:

«Այն ժամանակ ես կհամոզվեմ և կհանգստանամ», վճռեց Մարիամը:

Հետևյալ օրը դարձյալ տոն էր: Ռուբենը օգնում էր Մարիամին տնային գործերում, երբ պատշգամբի վրա հանկարծ երևաց Հալաբյանը: Ռուբենը չզարմացավ, բայց փոքր-ինչ շփոթվեց: Նա դուրս շտապեց հյուրին դիմավորելու և հարգանքով հրավիրեց ներս:

Ես եկել եմ հայտնելու, որ ձեր հորեղբոր գործերը հաջող են գնում, ասաց ամուրին, միանգամայն ընկերաբար թոթվելով երիտասարդի ձեռը:

Եվ իհարկե, ձեր շնորհիվ, ավելացրեց Ռուբենը, հրավիրելով նրան նստել, թույլ տվեք կրկին անգամ հայտնել շնորհակալությունս:

Ես երաշխավոր եղա, նրա երկու վեքսիլները փոխեցին մեկը վեց հազարի, մյուսը ութ հազարի, շարունակեց Հալաբյանը մի առանձին ինքնագոհությամբ: Էգուց էլ մի քիչ փող կգտնեմ, կտամ, հետո էլ վախենալու բան չկա, ձեր հորեղբայրը կազատվի անպատվությունից: Թող նա գա, ձեր ոտները համբուրի, դուք եք նրան ազատողը:

Արտասանելով այս խոսքերը մյուս սենյակում լսվելու չափ բարձր ձայնով, Հալաբյանը նայում էր աջ ու ձախ: Պարզ էր, որ նա Մարիամին էր սպասում:

Դարձյալ Ռուբենը ոգևորվեց, դարձյալ Հալաբյանը նրա առաջ պատկերացավ իբրև մի ազնիվ, բարեսիրտ մարդ, յուր տեսակի մի ասպետ: Մտքում նա մինչև անգամ մեղադրեց Մարիամին, որ այնքան ուշանում էր մի այդպիսի հյուրին ներկայանալու: Թվում էր նրան, թե ամենաչնչին մի անուշադրություն չպետք է թույլ տալ այդ մարդու վերաբերմամբ, թե նա արժանի է ամենախորին հարգանքի, թե վերին աստիճանի անքաղաքավարություն կլինի չհարգել նրան, մի այդպիսի հազվագյուտ մարդու: Ահա ինչու նա չկարողացավ զսպել իրան, անցավ մյուս սենյակ և Մարիամին խնդրեց շուտով դուրս գալ:

Ես չեմ կարող նրան երևալ, հակառակեց Մարիամը, դու զբաղեցրու, ես գործ ունեմ:

Անկարելի է, նա կկարծի, որ չես ուզում նրա երեսը տեսնել, ամոթ է Մարո, նա մեր հորեղբորը ազատել է խայտառակությունից, հասկանո՞ւմ ես:

Մարիամը ակամա հնազանդվեց եղբոր թախանձանքին, ակամա, որովհետև այլևս կասկած չուներ, որ Հալաբյանի այցելությունն աննպատակ չէ: Նա փոխեց յուր վերնազգեստը և դուրս եկավ:

Վայրկենաբար ամուրիի հոգեկան տրամադրությունը փոխվեց: Նա հազիվ կարողացավ զսպել յուր ուրախությունը, շտապեց առաջ և հարգանքով սեղմելով օրիորդի ձեռը, արտասանեց.

Հուսով եմ, որ իմ այցելությունը հանդգնություն չեք համարիլ. մեր վաղուցվա ծանոթությունը ինձ իրավունք տվեց: Առո՞ղջ եք:

Մարիամը գլուխը թեթև խոնարհեցրեց և նստեց սենյակի մի անկյունում:

Եկել եմ ձեր եղբորը հանդիմանելու, շարունակեց Հալաբյանը, ամեն օր տանս առաջով անցնում է, գոնե երկու օրը մի անգամ էլ չի մտնում: Շատ ցավում եմ, որ բարեկամությունը որդուց-որդի ժառանգաբար չի անցնում, դարձավ նա Ռուբենին, եթե իմանայիք ձեր հայրը ինչքան էր սիրում ինձ, այդպես չէիք վարվիլ ինձ հետ: Հանգուցյալը մի օր ինձ չտեսնելիս, տխրում էր: Միշտ ինձ ասում էր. «ես քեզ սիրում եմ որդուս պես, որովհետև քո հանգուցյալ հայրդ ինձ սիրել է յուր որդու պես»: Ախ, Գրիգորի Միրոնովիչ, ես երբեք չեմ մոռանալ քեզ:

Եվ նա վերջին խոսքերը այնպիսի զգացված ձայնով և խորհրդավոր եղանակով արտասանեց, որ կարելի էր կարծել, թե յուր հարազատ հոր մասին է խոսում:

Հոր հիշատակը դուրս հանեց Մարիամի կրծքի խորքից մի հառաչանք, որ նա, սակայն, շտապեց զսպել:

Հալաբյանը շարունակեց յուր խոսքը և հետզհետե մեկից մյուսին անցնելով, սկսեց խոսել յուր մասին: Նա գանգատվեց, որ յուր օրերը տխուր են անցնում: Կյանքը առհասարակ ձանձրալի բան է: Նա բավական զզվել է հասարակությունից, չգիտե ինչպես հեռու ապրել նրանից:

Հետո նա շատ անփույթ կերպով ակնարկեց յուր հասարակական դիրքը, յուր հարստությունը, այն հարգանքը, որ վայելում է զանազան շրջաններում: Եվ այս բոլորը նա յուր խոսակցության մեջ անցկացրեց մի այնպիսի վարպետությամբ օրինակներով և փաստերով, որ թվում էր, թե խոսում է լոկ խոսելու համար և էլ մի ուրիշ նպատակով:

Քանի մի րոպե Մարիամի կասկածը մեղմացավ, տեսնելով, որ Հալաբյանը խոսելիս ավելի Ռուբենին է դառնում, քան իրան: Նա չգիտեր, որ այդ մի տեսակ քաղաքականություն է ամուրիի կողմից: Նա հիմարություն համարեց յուր երկյուղը մի մարդուց, որ բացի բարեսիրտ և քաղաքավարի լինելուց, առայժմ ոչինչ չէ ցույց տալիս: Նա մինչև անգամ սկսեց խոսել Հալաբյանի հետ: Ռուբենը հաղորդել էր նրան մոսիո Վախվախյանի պատմած անցքը իշխան Սահարունիի մասին:

Էէէ, ոչինչ բան է, պատասխանեց Հալաբյանը օրիորդի հարցին, իշխանը մի փոքրիկ վեճ է ունեցել ձեր հորեղբոր պարտատերերից մեկի հետ, ուրիշ ոչինչ:

Անտանելի էր Հալաբյանի համար խոսել այն բաների մասին, որ չէին բխում նրա սրտից, որ չէին համապատասխանում նրա այժմյան զգացմունքներին: Խոմ երկար թաքցնել չէ կարելի, խոմ, վերջապես պետք է պարզվի նրա միտքը: Բայց ինչպես պարզել դիմե՞լ ուղղակի Մարիամին: Ոչ, ոչ, այդ անկարելի է: Եվ Հալաբյանը զգում էր, որ երբեք այդչափ քաջություն չի ունենալ: Դիմել Ռուբենին: Այդ ավելի դյուրին է: Նա բարեսիրտ երիտասարդ է, խելոք է, ժամանակակից, ազատամիտ: Նա է Մարիամի միակ մեծը և պաշտպանը, և նրա հետ կարելի է պարզ սրտով խոսել:

Մինչ նրա ուղեղը զբաղված էր այս խորհրդածություններով, լեզուն խոսում էր այլ բաների մասին, ժամանակը անցնում էր: Նա չէր կամենում ձանձրացնել Մարիամին, պետք էր հրաժեշտ տալ, և նա ոտքի կանգնեց:

Ես միշտ տանն եմ լինում, որ ժամին էլ գաք, ուրախ կլինեմ, ասաց նա, կրկին և կրկին խնդրելով Ռուբենին այցելել իրան:

Նախքան դուրս գալը, նա մի հայացք ձգեց յուր շուրջը: Մինչև այդ րոպե նա լավ ուշադրություն չէր դարձրել աղքատիկ բնակարանի անշուք կահ-կարասիի վրա: Անսովոր չքավորությունը տարօրինակ ազդեցություն գործեց նրա վրա: Նա և՛ ուրախ էր, և՛ խղճում էր Ռուբենին ու Մարիամին: Ա՜խ, որպիսի հաճությամբ նա կօգներ, եթե իմանար, թե չի վիրավորիլ նրանց ինքնասիրությունը: Նա չէր ուզում դուրս գալ, նա կամենում էր որևէ կերպով առաջարկել յուր օգնությունը Ռուբենին: Հանկարծ մի միտք լուսավորեց նրա ուղեղը: Մարիամը արդեն անցել էր յուր սենյակը, րոպեն հարմար էր:

Դուք ժամանակ ունե՞ք մասնավոր դասերով պարապելու, հարցրեց նա Ռուբենից:

Ինչու չէ:

Ես մի քրոջ որդի ունեմ, գիմնազիայի հինգերորդ դասատան աշակերտ է: Դուք, երևի, նրա մեծ եղբայրներին ճանաչում եք: Անկարգ տղերք են, ես գիտեմ, որ դուք նրանց չեք հավանիլ: Բայց այդ մեկը, ամենից փոքրը, խելոք տղա է, ես միայն նրան եմ սիրում, ուզում եմ, որ մյուս եղբայրների նման կիսատ-պռատ ուսում չառնի: Կհամաձայնե՞ք դասեր տալ նրան մինչև հարցաքննությունների ժամանակ:

Ռուբենը հաճությամբ հայտնեց յուր պատրաստակամությունը:

Նա ուրախացավ, որ մի բանով կարող է յուր հորեղբոր օգնողի բարության փոխարենը մասամբ հատուցանել:

Երբ որ հրամայեք, պատրաստ եմ:

Թե ժամանակ ունեք, հենց էգուցվանից սկսեցեք: Գիտեք, ես ուզում եմ նրան մյուս եղբայրներից հեռացնել: Նրան կբերեմ իմ տուն, դուք էլ տանս կպարապեք նրա հետ: Պայմանների մասին չեմ խոսում, որքան կամենաք...

Առանց որևէ պայմանի, պարոն Հալաբյան, ընդհատեց Ռուբենը: Դուք իմ հորեղբորս օգնելիս, պայման չառաջարկեցիք:

Լավ, լավ, էգուց եկեք, կխոսենք, շտապեց ավելացնել Հալաբյանը, վախենալով, որ մի գուցե Ռուբենը բոլորովին հրաժարվի:

Ամուրին հեռացավ մի փոքր թեթևացած սրտով: Ախորժելի էր նրա համար ամեն կերպ պարտավորեցնել Ռուբենին և այդպիսով մասամբ բարոյապես կաշկանդել նրան:

Լսեցի՞ր, Մարո, դարձավ Ռուբենը Մարիամին, Հալաբյանին ճանապարհ դնելուց հետո, մտնելով քրոջ սենյակը, նա ինձ խնդրեց, որ յուր քրոջ որդու հետ պարապեմ: Ուրեմն ես մի փոքրիկ բանով պարտքս կթեթևացնեմ, այնպես որ…

Ռուբեն, ընդհատեց Մարիամը եղբոր խոսքը, այդ պարոն Հալաբյանը շատ լավ մարդ է, բարի է, բայց…

Բա՞յց:

Ես չեմ ուզում, որ նա մեզ այցելե:

Պատճա՞ռը:

Հենց այնպես, չեմ ուզում:

Ասա, Մարո, առանց պատճառի չի լինիլ, ասա, եթե մի բան կա:

Ի՞նչ կապ մեր և նրա մեջ, ասա խնդրեմ. նա հարուստ է, մենք աղքատ:

Նա հարուստ է, մենք աղքատ հետո՞, ա՞յդ է բոլորը:

Ես կարծում եմ այսքանն էլ բավական է, որ մնացյալը դու հասկանաս: Ուրիշ ասելիք չունեմ:

Արտասանելով վերջին խոսքերը, Մարիամը հանդարտ վեր կացավ տեղից ու դուրս գնաց: Ռուբենը զարմացած նայեց նրա հետևից, մի քանի վայրկյան մտածողության մեջ ընկավ: Առաջին անգամ նրա սրտում ծագեց մի թույլ կասկած Հալաբյանի մասին:

«Քույրս ճշմարիտ է ասում, խոսեց նա մտքում, մեր և այդ հարուստ Հալաբյանի մեջ ի՞նչ կապ կարող է լինել: Ինչ կա՞պ… չէ՞ որ նա իմ հոր բարեկամն է: Հետո՞: Ոչ. Մարոն ճշմարիտ է ասում: Մի՞թե ես այդքան պարզամիտ եմ: Մի՞թե Հալաբյանի բարեկամությունը մի ուրիշ նպատակ ունե: Ահա հենց այդ բանը պետք է իմանալ»…

Եվ ամբողջ օրը նա քրոջ խոսքերի ազդեցության տակ էր: Որքան նա թախանձեց, որքան ստիպեց, Մարիամը այլևս ոչինչ չխոսեց այդ մասին, և միայն կրկնում էր.

Ինքդ մտածիր:

Հասկանում եմ, ասաց, վերջապես, Ռուբենը, այդպիսի մի մարդ, ինչպիսին Հալաբյանն է, եթե մի նպատակ ունե մեր վերաբերմամբ, այդ նպատակը ուրիշ ոչինչ չի կարող լինել, եթե ոչ... Նա ամուրի է և գուցե... Բայց, Մարո, ես այդ

կողմից բոլորովին վախ չունեմ: Դու անկախ ես... հասկանում ես, ոչ ոք, ոչ ոք չի կարող ճնշումն գործել քեզ վրա... հասկանո՞ւմ ես: Գալով ինձ, երբեք, բացի եղբայրական խորհրդից, ոչինչ իրավունք մի՛ սպասիլ ինձանից: Այո, ես հասկանում եմ միտքդ: Բայց դու երեխա չես, իսկ ես միշտ ուժ կունենամ քեզ պաշտպանելու ամեն տեսակ քեզ համար անախորժ բաներից...

Ես այդ գիտեմ, Ռուբեն, արտասանեց Մարիամը, տեսնելով, որ եղբայրը հասկացել է յուր միտքը, շնորհակալ եմ: Մի բան միայն խոսեմ. ես Հալաբյանի մասին վատ կարծիք չունեմ, բայց կրկնում եմ, նրա այցելությունը ինձ ճնշում է: Իսկ դու ինքդ կարող ես նրա հետ բարեկամ մնալ:

Եթե այդպես է, ես այնպես կանեմ, որ նա երկրորդ անգամ այստեղ չգա, վճռեց Ռուբենը, վերջ տալով խոսակցությանը:

XI

Հասավ այն օրը, երբ պետք է փայլեր օրիորդ Նատալիան: Երեկոյան ինը ժամն էր, Թիֆլիսի ժողովարանի ձմեռային բնակարանում տիրում էր մի անսովոր շարժում: Իշխան Սահարունին ֆրակ և սպիտակ փողպատ հագած կարգադրություններ էր անում: Հանդիսավոր հագնված սպասավորները մի անսովոր եռանդով կատարում էին նրա աջ ու ձախ սփռվող հրամանները:

Բազմաթիվ տոմսակները վաղօրոք տարածված էին հասարակության մեջ, հույս կար, որ բարեգործական երեկույթը պիտի բազմամարդ լինի: Ժողովարանի հարյուրավոր մոմերով լուսավորված սենյակները մի առանձին շուք էին ստացել: Գլխավոր դահլիճի մի ծայրը բռնված էր վիճակախաղի իրերով: Մյուս ծայրում առանձին-առանձին կանգնած էին երեք տոմսակ վաճառող օրիորդներ, շրջապատված իրանց երկրպագու կավալերներով:

Երաժշտությունը վերնահարկից դղրդեցրեց դահլիճները: Հանդիսականները հետզհետե հավաքվում էին: Նախասենյակում խռնված էր կոչված և անկոչ կարգադրիչների մի խումբ: Այստեղ, մի անկյունում, տրոպիկական բույսերի տերևների միջից, երևում էր չորրորդ տոմսավաճառի գլուխը: Սանդուղքից վեր բարձրացողին ուժով քաշում էին այդ օրիորդի մոտ և ստիպում տոմսակ վերցնել:

Մոտ տասը ժամն էր, երբ, վերջապես, երևեցավ Նատալիան մոր ուղեկցությամբ:

Նատո, այդպես չի կարելի ուշանալ, հանդիմանեց իշխանը շշնջյունով, ամենը քեզ են սպասում:

Սակայն Նատոն վատ էր տրամադրված, յուր քեռու նկատողությունը անուշադիր թողեց: Մադամ Կուրաժոն խաբել էր նրա հույսը, նոր հագուստը դուր չէր եկել օրիորդին, որքան սպասում էր: Նա հանդիմանել էր մադամին շատ կոպիտ խոսքերով, և վերջինը, ակնարկելով օրիորդի նիհարությունը, պատասխանել էր.

Մադմուազել, մեղավորը ձեր ցցված ոսկորներն են, կան բաներ, որ մոդիստկան չի կարող ուղղել: Այնուամենայնիվ Նատալիան հագել էր յուր նոր հագուստը, որ կարված էր կաթնագույն նուրբ մետաքսից և զարդարված պարիզյան վոլանսե կրուժևաներով: Նրա ուսերն ու թևերը կիսով չափ բաց էին:

Ճանապարհին մայրը նրան հորդորել էր, որ մոռանա տխուր անցքը, յուր դեմքին զվարթություն տա: Բարձրանալով սանդուղքով վեր, նրա աչքերի մեջ փայլեց ինքնագոհություն, բարակ շրթունքների վրա տխրությունը տեղի տվեց սովորական գոռոզ ժպտին: Նա մի կողմնակի հայացք ձգեց հայելիի մեջ, հագուստը այնքան էլ վատ չէր նստում, որքան կարծում էր: Նա մի առանձին հաճություն զգաց, տեսնելով յուր պարանոցի կաշվի քնքշությունը, և մի անգամ ևս մտքում հայհոյեց մադամ Կուրաժոյին: Ընդհանրապես նա տգեղ չէր, կային մարդիկ, որ մինչև անգամ շատ գեղեցիկ էին համարում նրան, գովելով նրա բարակ մեջքը, երեսի գույնը և թուխ-թուխ, թանձր հոնքերը:

Նա լսեց մի քանի կոմպլիմենտներ, նրան շրջապատեցին, նա զվարթացավ: Հովհարի ծայրը, անգլիական պոլիսմենի ձևով, մոտեցրեց մի քանի ծանոթների, և ոմանք հետևեցին նրան՝ տոմսակ գնելու:

Դահլիճը հետզհետե լցվում էր, խուլ աղմուկը ավելի ու ավելի սաստկանում էր:

Հասարակության մեջ երևեցավ Ախշարումյանի սև և գեր պարանոցը: Որկրամոլը առողջացել էր: Պետք է ասած, որ մոսիո Վախվախյանը նրա հիվանդության լուրը մեծացրել էր, ինչպես սովոր էր փքել ամեն մի չնչին լուր:

Տասը-տասը ռուբլու ամեն մի արկղից ավել չեմ պահանջում, դիմեց նրան իշխանը, թևից բռնելով և քաշելով տոմսավաճառների մոտ:

Այդ բանում հավասարության օրենքին ես խիստ հակառակ եմ, ասաց Ախշարումյանը, ով ավելի գեղեցիկ է, նրա համար ավելի կզոհեմ: Բարեգործությունն էլ ճաշակի բան է, ես փողերս նվիրում եմ կանանց և ոչ թե գործին:

Եվ նա յուր ճաշակի համաձայն դիմեց այն արկղին, որի մոտ կանգնած էր ամենագեղեցիկը տոմսավաճառ կանանցից:

Հասարակությունը Նատալիայի քեֆովը չէր: Գերազանցող տարրը դարձյալ հասարակ վաճառականների ընտանիքներն էին: Նա անհամբեր սպասում էր «արիստոկրատներին», առանձնապես կոմսուհի Նավալիխինային: Նրա տրամադրությունը ավելի վատացավ, տեսնելով մի քանի «սյուրտուկավոր» երիտասարդներ, որ ինքնագլուխ, կոպիտ կերպով, քաշում էին սրան ու նրան և մոտեցնում տոմսավաճառներին:

Ովքե՞ր են այդ չուչելները, հարցրեց օրիորդը իշխանից:

Նորին պայծառափայլությունը հեգնաբար ժպտալով, պատասխանեց.

Մեր ազգասերները:

Որ մեջտեղ չընկնեն, լավ կլինի:

Այդ րոպեին տիկին Սոփիոն, Հալաբյանի թևից բռնած, մոտեցավ աղջկանը: Մտնելով դահլիճ, տիկնոջ առաջին հույսը եղավ գտնել ամուրիին, երկրորդը՝ դիմավորել անվանի կոմսուհուն: Միթե չե՞ք պարելու, որ դուք էլ սյուրտուկով եք եկել, հարցրեց Նատալիան դժկամությամբ:

Ո՛չ:

Զարմանալի է, կարծես, բոլորը երդվել են իմ բալս փչացնել այս երեկո:

Ինչո՞ւ, տոմսակները լավ են վաճառվում, ես կարծում եմ մեծ եկամուտ կունենաք:

Շատ հարկավորս է եկամուտը, իմն այն է, որ բալս ուրախ անցնի, շքեղ լինի: Այդ սյուրտուկները ամեն բան տգեղացնում են:

Ամուրին շտապեց յուր բարեգործական տուրքը վճարելու տոմսավաճառներին: Հետո նա, օգտվելով Սոփիոյի և Նատալիայի զբաղված դրությունից, հեռացավ և խառնվեց ամբոխին: Մի քանի ժամ առաջ Ռուբենը նրա մոտ էր եղել, և նա վարպետությամբ իմացել էր, որ Մարիամն ևս երեկույթ է գալու: Անցնելով մի դահլիճից մյուսը, ամեն տեղ աչք ածելով, նա չգտավ Մարիամին, և արդեն հուսահատվելու վրա էր, երբ մի անկյունում տեսավ Ռուբենին մի քանի երիտասարդների հետ:

Դուք միայնա՞կ եք եկել, հարցրեց նա, չկարողանալով զսպել յուր հետաքրքրությունը:

Մինչև Ռուբենի պատասխանելը, նա տեսավ Մարիամին: Օրիորդը յուր վարժուհու հետ կանգնած խոսում էր: Պատից քարշ արած մեծ կանթեղը առատ լույսը սփռել էր նրա վրա: Եվ այդ լուսո ներքո նրա երեսի գունատությունը այնքան նկատելի չէր. աչքերի մեջ միայն փայլում էր մի տեսակ տենդային հուզմունք խառն մելամաղձոտության հետ: Նա արագ-արագ հովհարում էր իրան, անդադար նայելով աջ ու ձախ անհամբեր հայացքով: Նա հագած էր յուր բաց արճիճագույն մետաքսյա հագուստը, պարզ, առանց ավելորդ զարդարանքի:

Բարեբախտաբար Հալաբյանը կարուձևի վարժուհու հետ ծանոթ էր: Նա բարևեց, կանգ առավ և սկսեց խոսակցել: Մարիամը զգաց դարձյալ սովորական ճնշումը: Թվում էր նրան, որ ամեն կողմից յուր վրա են նայում, որ ամենը իսկույն պիտի սկսեն նրա մասին խոսել, բամբասել: Հալաբյանը հանեց գրպանից յուր վերցրած տոմսակները, որ դեռ չէր բաց արել: Նա կեսը տվեց վարժուհուն, կեսը Մարիամին և խնդրեց բաց անել: Բոլորը փուչ դուրս եկան: Այդ անհաջողությունը գրգռեց նրա սնահավատությունը, որից նա զերծ չէր: Նա հեռացավ և իսկույն վերադարձավ մի բուռն տոմսակներ ձեռին: Այս անգամ

Մարիամի բացածներից երկուսը նոմերով էին:

Ձեր ձեռքը բախտավոր է ինձ համար, ասաց Հալաբյանը խորհրդավոր եղանակով:

Նա այժմ ուրախ էր, որ պտույտ-պտույտ էր անում Մարիամի շուրջը, աշխատելով օրիորդի դեմքի վրա շարժել մի ժպիտ: Բայց վերջինս լուռ էր և մտախոհ:

Հանկարծ Մարիամը մի ցնցում զգաց: Մելիք-Բարսեղյանը անցնում էր նրա մոտով: Տեսնելով Մարիամին, նա քաղաքավարությունից դրդված մոտեցավ, արտասանելով.

Դուք այստե՞ղ եք:

Բժիշկը ծանոթ էր Հալաբյանի հետ:

Մարիամի սիրտը ուժգին բաբախում էր: Ինչ էր այդ երկյո՞ւղ, սե՞ր, ատելությո՞ւն, թե՞ հետաքրքրություն չգի՛տեր: Զգում էր միայն, որ նա դարձյալ կաշկանդում է յուր կամքը, խլում է հաստատակամության վերջին ուժը: Այն, ինչ որ մի րոպե առաջ համոզմունք էր, դարձյալ փոխվեց կասկածի: Բժիշկը խոսում էր երեկույթի մասին: Կրկին թույլ հույսի նման մի բան զարթնեց Մարիամի սրտում: Միթե ամեն ինչ վերջացած է, մի՞թե: Նրա համար ախորժելի էր հուսալ, և այդ հույսը նա ստանում էր բժշկի մի ամենաթույլ ժպտից, մի անորոշ հայացքից: Նա զգում էր բուռն ցանկություն բժշկի հետ առանձնանալու: Վախենում էր, որ մի գուցե նա թողնի իրան և հեռանա: Պետք է նրա հետ խոսել, թող ինչ ուզում է լինի, անորոշությունը ծանր է, դառն է, անտանելի է:

Դուք չե՞ք պարելու, հարցեց Հալաբյանը Մելիք-Բարսեղյանից:

Ես շատ հազիվ եմ պարում:

Հալաբյանը դժգոհությունից կծեց ներքին շուրթը: Նկատելով Մարիամի դեմքի փոփոխությունը, նրա սիրտն արդեն մի կասկած էր ընկել: Արդյոք մի որևէ կապ կա՞ նրանց մեջ, մտածում էր ամուրին: Նա զննեց բժշկին, և մի նախանձ

զարթնեց նրա սրտում: Երիտասարդությունը, աշխույժ խոսակցությունը, «բժիշկ» կոչումը ահա այդ նախանձի առաջին պատճառը: Նա սկսեց ատել բժշկին և մտածում էր ինչպես նրան հեռացնի Մարիամից:

Նրանց մոտով ծանր քայլերով անցավ տիկին Սոփիոն մի ինչ-որ վրացի իշխանի հետ: Մարիամը երեսը մի կողմ դարձրեց: Տիկինը, տեսնելով նրան Հալաբյանի հետ, մտքում զրգռվեց: Նա որոնում էր ամուրիին, նրան մոտեցավ միայն բժիշկ: Երևեցավ և իշխան Սահարունին: Մարիամը վարժուհու թևից բռնելով, հեռացավ, խույս տալով թե՛ իշխանից և թե Սոփիոյից:

Երկու խոսք ունեմ քեզ ասելու, ասաց իշխանը առնելով Հալաբյանի թևը:

Ի՞նչ ես ուզում ինձանից, պատասխանեց Հալաբյանը մի այնպիսի եղանակով, որ արտահայտեց նրա խորին դժկամությունը:

Դու անպատճառ պիտի պարես:

Ե՞ս:

Այո', դու:

Դու խելագարվել ես, իշխան. ես տասը տարի է չեմ պարում:

Իմ խաթրու պետք է պարես, թե չէ՝ էլ ինչ պռիկաշչիկ-մռիկաշչիկ ասես մեջ են ընկել, ուզում են պարել: Քրոջս աղջկա բալը փչացնում են, նա վրդովված է: Ես արդեն մի քանի զույգ կազմել եմ, ուզում եմ, որ օրինավոր մարդիկ մեջտեղ մտնեն: Կոմսուհի Նավալիխինան այստեղ է. ամոթ է: Հալաբյանը մեծ դժվարությամբ կարողացավ ազատվել իշխանի ձեռքից և գնաց Մարիամին գտնելու:

Վիճակախաղը վերջացել էր, հատակի վրա սփռված էին պատռոտված տոմսակները: Պարերը արդեն սկսվել էին: Նատալիան վալս էր պտտում մի երիտասարդ սպայի հետ, որին նա համոզել էր պարերի կառավարիչ լինել: Դահլիճը ծայրեիծայր լիքն էր: Հանդիսականները, ըստ երևույթին, գոհ էին երեկույթից: Միայն մի քանիսի դեմքերն էին տխուր, նրա՛նց, որոնք

վիճակախաղի վրա կորցրել էին իրանց վերջին ռուբլիները: Մի տիկին, դահլիճի մուտքի մոտ նստած, հաշվում էր երեկույթի եկամուտը: Մի ուրիշ տիկին, հեռվից, նրան ծաղրում էր յուր խոսակիցների հետ:

Ես զարմանում եմ, ասում էր ծաղրողը, դեմքը ծռմռելով, այդ մարդիկ երևակայում են, որ գործ են շինում: Ընկել են բազարները, ինչ «խլամ» ասես հավաքել են, բերել մանրավաճառի խանութ բաց արել... Ֆի դո՛ն, ես զզվում եմ:

Եվ ի՞նչ հասարակություն են հավաքել, տեր աստված, ով որ ասես կա, հարեց նրա խոսակիցը:

Չէ, չէ, գլխավորն այն է, չեն ամաչում, գնացել են ու կոմսուհի Նավալիխինային հրավիրել, խի-խի-խիի՛:

Սուտ իշխանի աղջկանից կամ նախկին բազազի կնկանից ավելի բան սպասել չէր կարելի:

Այսպես, բամբասանքներին, արհամարհական ակնարկներին, ժպիտներին, կծու ակնարկություններին վերջ չկար: Եվ ամենի ուշադրության կենտրոնը տիկին Սոփիոն էր յուր աղջկա հետ:

Նատալիան ստեպ-ստեպ մոտենում էր կոմսուհուն և զբաղեցնում նրան: Ամեն ճիգ գործ էր դնում, որ բարձրաստիճան տիկինը գոհ լինի և գլխավորապես այդ բանի մեջ էր տեսնում երեկույթի հաջողությունը: Տիկին Սոփիոն այնքան չէր զբաղված կոմսուհով, որքան Հալաբյանին յուր մոտ ունենալու մտքով: Իսկ Հալաբյանը չկար, չէր երևում, և տիկինը կատաղությունից մատներն էր կրծոտում, զգալով, որ նա այս երեկո ևս ընկած է Մարիամի հետևից:

Դահլիճը թնդում էր երաժշտության փողերի ու թմբուկների հնչյուններից, պարողների ոտների տրոփյունից: Մերթ ընդ մերթ լսվում էր պարագլուխ սպայի խրոխտ, բարձր ձայնը, որ ղեկավարում էր պարողներին:

Ձերդ պայծառափայլություն, կարծյոք, բավական զվարճալի է, այս, ներեցեք ասել, բա՛ալը դարձավ կոմսուհուն նրա ուղեկիցներից մեկը հեգնաբար:

Կոմսուհին ժպտաց: Իրավունք ունեք, Պետր Աֆանասևիչ, արժեր տեսնել այս տարօրինակ հասարակությունը:

Առանձին ուշադրության արժանի է այդ գեղեց…կու…հի… նե…րի… հագուստը, մանավանդ գրացիան, էֆ, էֆ, էֆ, մեջ մտավ երկրորդ ուղեկիցը և սկսեց բարձրաձայն ծիծաղել:

Պարոններ, զգույշ կացեք, մի՛ մոռանաք, որ մենք այստեղ հյուր ենք, սաստեց կոմսուհին շշնջյունով:

Իսկ կառավարչուհին, ֆո, ֆո, ֆո, հիանալի է:

Իսկ մա՜յրը:

Ռիստոկրատկա՜:

Խի խի խի, ծիծաղեց կոմսուհին, յուր կարմիր երեսը մեծ հովհարով ծածկելով:

Նատալիան պարում էր և, միևնույն ժամանակ, աչքը չէր հեռացնում կոմսուհուց: Նկատելով վերջինի զվարթ ծիծաղը, մտքում ուրախացավ, որ բարձրապատիվ հյուրը այնքան զվարճանում է:

Երևակայեցեք, խոսեց դարձյալ կոմսուհու հանաքչին, այդ սև-սև դեմքերի մեջ ես տեսնում եմ, վերջապես, մի ոչ տգեղ երես:

Ո՞ւր է, ո՞ւր է:

Հանաքչին կոմսուհու ուշադրությունը դարձրեց Մարիամի վրա, որ այդ վայրկյանին անցնում էր նրանց մոտով միայնակ: Նա գլուխը հավանորեն շարժեց: Նույն պահին մոտեցավ նրան Նատալիան:

Ասացեք, խնդրեմ, ո՞վ է այդ համակրելի դեմքով օրիորդը, հարցրեց կոմսուհին:

Անզուսպ նախանձը վայրկենաբար պղտորեց Նատալիայի սիրտը, երբ տեսավ, որ կոմսուհու հավանածը Մարիամն է: Նա պատասխանեց, թե չէ ճանաչում «այդ աղջկան»:

Մարիամը Ռուբենին էր որոնում: Նա միայնակ անցավ սեղանատուն, ուր արդեն առանձին-առանձին սեղանների շուրջը նստած ընթրում էր հասարակության մի մասը: Ռուբենը այստեղ չէր: Մարիամը ետ դարձավ, և մեծ դահլիճ չհասած, տեսավ բժշկին, որ երկու երիտասարդ օրիորդների հետ-տաք-տաք խոսում էր: Այդ երկուսից մեկը քաղաքի մի հարուստ ընտանիքի զավակ էր, հոչակված յուր խոշոր օժիտով:

Մարիամը չկարողացավ զսպել իրան, նրա արյունը սառավ երակներում, աչքերը պղտորվեցին:

«Ի՞նչ շուտ կարողացավ ծանոթանալ դրանց հետ», ասաց նա մտքում: Բժշկի դեմքը արտահայտում էր խորին բավականություն, նա շատ ուրախ էր երևում: Հոգով ցանկանում էր Մարիամը հեռանալ այդ չարագուշակ երեկույթից, ուր հետզհետե ավելանում էր նրա տանջանքը: Բայց ի՞նչ անհաղթելի ուժ էր այն, որ դարձյալ մղում էր նրան դեպի այդ մարդը և որ տակավին ստիպում էր նրան հետամուտ լինել մի չքացող բախտի: Կատաղի խանդը կրծում էր նրա սիրտը: Նա չկարողացավ ոչ առաջ գնալ, ոչ ետ դառնալ: Նա մնաց տեղն ու տեղը, աչքերը դարձրած դեպի այն կողմը, ուսկից լսվում էր բժշկի բարձրաձայն ծիծաղը: Օրիորդները անցան դահլիճ: Բժիշկը, մեջքից թեքված, հետևեց նրանց զվարճախոսելով, ծիծաղելով և աջ ու ձախ արտասանելով «վինովատ», «պարդոն», «ներողություն», ում ինչ լեզվով հարկավոր էր:

Մարիամը կանգնած էր միևնույն տեղում, մեջքը հենած սանդուղքի վանդակապատին:

Ի՞նչ է պատահել քեզ, լսեց նա եղբոր ձայնը, դու հոգնե՞լ ես արդեն:

Այո, հոգնել եմ, գնանք, գնանք այստեղից:

Ոչ, շատ վաղ է դեռ: Կես ժամ է քեզ պտրում եմ, չեմ գտնում: Գնանք դահլիճ, ես ուզում եմ քեզ ծանոթացնել իմ ուսանողական ընկերների հետ:

Ոչ ոքի հետ չեմ ուզում ծանոթանալ: Մի տեղ նստենք, քիչ հանգստանանք, գլուխս պտտում է:

Ուրեմն չե՞ս պարելու:

Ոչ:

Ռուբենը նրան ուղեկցեց ասիական ձևով կահավորված դահլիճը, ուր փափուկ գահավորակների վրա նստած էին խումբ-խումբ հանդիսականներ:

Ախ, Մարո, եթե իմանայիր ինչպես էի վիճում մի կես ժամ առաջ իմ ընկերների հետ: Տեր աստված, ի՜նչպես մարդիկ փոխվում են և ի՜նչպես շուտ: Ես չեմ ճանաչում իմ նախկին ընկերներին, բոլորը փոխվել են, բոլորը մանրացել են, բոլորի խոսակցության նյութը այժմ կանայք են, իրանց պաշտոնները, իրանց զվարճությունը ուրիշ ոչինչ: Որքան հիմար դրության մեջ դրեցի ինձ, խոսելով նրանց հետ այն առարկաների մասին, որ մեզ ոգևորում էին: Դու պետք է լսես, թե ինչպես նրանք միմյանց ծաղրում են, քննում, քննադատում, բամբասում: Ահա հենց այդ բանի մասին էի վիճում նրանց հետ մի փոքր առաջ:

Եղբայրը խոսում էր, քրոջ միտքը ո՞ւր էր: Կրկին նրա աչքով ընկավ բժիշկը նույն օրիորդի հետ:

Գնանք տուն, Ռուբեն, ասաց նա, բռնելով եղբոր բազուկը, այստեղ սաստիկ տոթ է, ես խեղդվում եմ, գնանք:

Բայց դու այս երեկո բոլորովին չզվարճացար: Ես ուզում եմ քեզ հետ մի քիչ պարել: Մերժո՞ւմ ես:

Դարձյալ երևաց Հալաբյանը: Ամբողջ մի ժամ մերթ իշխան Սահարունիի, մերթ տիկին Սոփիոյի և մերթ օրիորդ Նատալիայի ձեռքին տանջվելուց հետո, ամուրին, վերջապես ազատվել էր:

Արդյոք չէի՞ք կամենալ ընթրել, դիմեց նա Ռուբենին և Մարիամին:

Նա մերժումն ստացավ, և մինչ աշխատում էր համոզել, նրա թևից բռնեց Ախշարումյանը և քաշեց մի կողմ:

Բավական է, թող այդ հիմարություններդ, ասաց որկրամոլը, ի՞նչ ես ընկել այդ աղջկա հետևից: Գնա՛նք ընթրելու:

Հալաբյանը կատաղեց:

Թողեք ինձ հանգիստ, ի սեր աստուծո, խեղդուկ ձայնով արտասանեց նա, յուր թևը ազատելով Ախշարումյանի ձեռից:

Գնա՛, դու գժվել ես:

Հալաբյանը հետ վերադարձավ: Բայց Ռուբենն և Մարիամը չկային իրանց առաջվա տեղում: Նա անցավ ասիական դահլիճին կից փոքրիկ սենյակը: Այստեղ ոչ ոք չերևաց: Նա քայլերը ուղղել էր դեպի գլխավոր դահլիճը, երբ նրա ականջին հասավ մի շշնջման ձայն: Նայեց դեպի սենյակի կիսալուսավոր անկյունը և մնաց տեղն ու տեղը անշարժ: Նա չէր սխալվում. դա Մարիամն էր, նստած գահավորակի վրա: Իսկ մյո՞ւսը, բժիշկ Մելիք-Բարսեղյանն էր: Յուր եղբոր հետ հանդիպելով բժշկին այդ սենյակում, օրիորդը խնդրեց Ռուբենին թողնել իրանց մի քանի րոպե առանձին: Նա վճռեց անել վերջին քայլը. նա կամեցավ բացատրություն պահանջել Մելիք-Բարտեղյանից: Եվ ահա նրանք նստած էին դեմուդեմ...

Մի վայրկյան նրանք լուռ նայեցին միմյանց երեսին: Մարիամի աչքերի մեջ փայլում էր մի հուսահատ վճռականություն: Բժիշկը գուշակեց նրա միտքը: Նա զգաց, որ արդեն հասել է բարոյական ճգնաժամը, որ դեմուդեմ նստած է մի անողոք դատավոր, որին պարտավոր է հաշիվ տալ յուր վարվողության մասին: Նա շփոթվեց, նայեց աջ ու ձախ. ոչ ոք չէր երևում, բոլոր հանդիսականները կից դահլիճներումն էին:

Բժիշկ, ընդհատեց Մարիամը վայրկենական անախորժ լռությունը մի այնպիսի ձայնով, որի մեջ հազիվ զգացվում էր նրա հոգեկան խռովությունը, այսօր ես վճռեցի ձեզ հետ խոսել վերջին անգամ: Հուսով եմ, որ չեք մերժիլ մի քանի րոպե ինձ նվիրել, մի քանի րոպե միայն, այնուհետև դուք ազատ եք: Կարո՞ղ եք լսել:

Այստե՞ղ, պատասխանեց բժիշկը, շվարված աչ ու ձախ նայելով, այս հասարակական տեղո՞ւմ, Մարո, մեր խոսակցությունը, եթե գաղտնիք է, կարող են լսել:

Մի վախենաք, ոչ ոք չի լսիլ: Ես այստեղ ընտրեցի մեր բացատրության համար այն պատճառով, որ մենք այսուհետև ուրիշ ոչ մի տեղ չենք կարող տեսնվել... Երբե՛ք: Միամիտ կացեք, մի կարծեք, որ ես ձեզ կանպատվեմ: Ոչ, գիտեմ, որ դուք վախենում եք հասարակությունից:

Լսեցեք, ես ամեն բան զգում եմ, ավելորդ կլինի, եթե դուք սկսեք պարզել դեպի ինձ ձեր զգացմունքները: Դուք ինձ չեք սիրում, ես գիտեմ ա՛յդ, գիտեմ այն էլ, որ երբեք, երբեք չեք սիրել ինձ: Բայց... ասացեք... ի՞նչ էր նշանակում ձեր այդ դառն կատակը ինձ հետ: Պատասխանեցեք, ինչո՞ւ համար դուք այդպես վարվեցիք, ինչո՞ւ... Բժիշկը դարձյալ նայեց աչ ու ձախ: Չնայելով, որ Մարիամը խոսում էր ցածր ձայնով, գրեթե շշնջյունով, բժիշկը այնուամենայնիվ կարծում էր, որ կարող են լսել նրա ասածը: Օրիորդի արտաքին կեղծ սառնությունը նրան չէր խաբում: Նա զգում էր նրա ներքին բուռն հոգեկան խռովությունը, զգում էր և վախենում մի գուցե խոսակցությունը շարունակելով, առիթ տա մի անախորժ տեսարանի:

Մարո, հաղորդեց նա մեղմ և փաղաքշական ձայնով, թո՛ղ, հետո կխոսենք այդ մասին: Ես պատրաստ եմ քեզ բացատրություն տալ, բայց ոչ այստեղ: Նայի՛ր, ավելացրեց նա, ցույց տալով դեպի մեծ դահլիճը, որի դռների մոտ երևում էին մի խումբ հանդիսականներ:

Մարիամը հեգնաբար ժպտաց:

Ինչի՞ցն եք վախենում, շարունակեց նա համառությամբ, որ ես աղմո՞ւկ կբարձրացնեմ այստեղ, որ ես կարտասվե՞մ, որ ես ձեր անունը խոսակցության և բամբասանքի առարկա՞ կդարձնեմ: Չե՞ք ճանաչում ինձ, մոռացե՞լ եք… Ոչ, պատվելի բժիշկ, ես այդ չեմ անիլ, ես ինձ թույլ չեմ տալ մի երիտասարդ բժշկի, հա՛, հա՛, հա՛, պատիվը արատավորել: Բայց ես պետք է ձեզանից հաշիվ ստանամ ձեր վարմունքի մասին, հասկանո՞ւմ եք: Ի՞նչ, դուք կարծում էիք, որ գործ եք ունեցել մի խեղճ, մի ողորմելի, մի անլեզու աղջկա հետ, որ կարող է երեկվա ձեր վարմունքը այսօր մոռանա՞լ: Հասկացեք, ուրեմն, ձեր առաջ նստած

է մի չափահաս կին, որ ինքը կարող է յուր պատիվը պաշտպանել: Տեսնո՞ւմ եք, այսօր, այս հասարակական տեղում, ես ամեն ինչ արհամարհելով, պահանջում եմ ձեզանից այն, ինչ որ իրավունք ունեմ պահանջելու: Տվե՛ք ինձ պատասխան, ասացե՞ք, ի՞նչ իրավունք ունեիք կարծելու, որ ես փողով ինձ համար փեսացու առնողներից եմ: Լռեցե՛ք… Թույլ տվեք խոսքս վերջացնեմ, խոմ ձեր հոգին այժմ ինձ համար պարզ է, խոմ դուք մի ծախու ապրանք եք… հը՞մ, դուր չէ՞ գալի՛ս ձեզ իմ ասածը: Միթե ճի՞շտ չէ, միթե դուք ձեր անունը, ձեր երիտասարդությունը, ձեր կրթությունը, ձեր գաղափարները, ձեր պատիվն անգամ կշեռքի մի թաթի վրա չեք դրել, մյուս թաթի վրա ոսկի՛-ոսկի՛ եք կանչում. Չէ՞, այսպես չէ՞: Հերքեցեք, եթե սուտ եմ ասում, պաշտպանվեցեք, եթե ասածս զրպարտություն եք համարում, հերքեցեք, որ դուք... մի մի մի... բախտախնդիր չեք...

Քանի խոսում էր օրիորդը, հետզհետե կորցնում էր սառնությունը և նրա սրտի դառնությունը ավելի ու ավելի զգացվում էր աստիճանաբար հուզվող ձայնի ելևէջների մեջ: Եվ նրա նիհարությունը, նրա դեմքի գունատությունը, նրա աչքերի հիվանդոտ փայլը սարսափեցնում էին բժշկին: Նա ցնցվում էր օրիորդի ամեն մի խոսքից, նա անդադար նայում էր յուր շուրջը: Վերջին խոսքը նրան բոլորովին զինաթափ արավ: Նա ցանկանում էր, որ այդ րոպեին ներս մտնի մի ծանոթ մարդ և վերջ դնի այդ տագնապալի դրությանը: Սակայն երաժշտության ձայնը դեռ լսվում էր, պարերը դեռ շարունակվում էին: Երբեմն-երբեմն միայն մի հանդիսական մտնում էր սենյակի մի դռներով և իսկույն դուրս գալիս մյուս դռներով, ծուլորեն նայելով աջ ու ձախ և ուշադրություն անգամ չդարձնելով նրանց վրա:

Ախ, տեր աստված, փոխեց հանկարծ յուր ձայնը Մարիամը, վերջապես, չկարողանալով շարունակել յուր կեղծ սառնասրտությունը, ի՛նչ եմ ասում, որքա՛ն հիմար եմ ես: Ո՞ւմ հետ եմ խոսում: Ի՞նչ եմ պահանջում ես ձեզանից: Դուք լռում եք, դուք չափից դուրս շփոթված եք, դուք ուզում եք փախչել ինձանից: Գնացեք, ավելացրեց նա, մի վայրկյան լռելուց հետո, ես չեմ կարողանում ձեզ հետ սառնասիրտ խոսել: Թողեք ինձ, հեռացեք, դուք ազատ եք, այնտեղ ձեզ սպասում են... ուրիշները:

Նա թուլացած թիկն տվեց գահավորակին: Նա զգում էր, որ ինքն էլ չգիտե ինչ է ասում, որ առհասարակ այն չի խոսում, ինչ որ հարկավոր էր խոսել: Նրա դողդոջուն ձեռը ուժգնակի շարժում էր լայն հովհարը: Նա զգաց օդի սաստիկ պակասություն, նրա շնչառությունը ծանրանում էր:

Չե՞ք կամենում դահլիճ անցնել, լսեց նա բժշկի ձայնը, և այդ ձայնը հնչեց նրա ականջին իբրև մի հանդուգն հեգնություն, իբրև մի սառն արհամարհանք:

Այլևս միանգամայն ավելորդ էր խոսել: Նա ճիգն արավ և անսպասելի արագությամբ ոտքի կանգնեց: Նա նայեց մի վայրկյան բժշկի երեսին և խեղդված ձայնով, գրեթե խուլ շշնջյունով արտասանեց.

Գնացեք ձեզ համար բախտ որոնեցեք, իսկ ե՛ս…

Նա ծածկեց երեսը հովհարով և քայլերը ուղղեց դեպի հակառակ կողմ: Երբ բժիշկը հեռացավ, նրա առաջ դուրս եկավ սենյակի կիսախավար անկյունից… Հալաբյանը: Ամուրին հուզված էր, նրա աչքերի մեջ փայլում էր սաստիկ անհանգստություն: Մարիամը նայեց նրա երեսին, և վայրկենաբար սթափվեց:

«Մի՞թե լսել է իմ ասածները», անցավ նրա մտքով:

Նա թույլ տվեց ամուրիին լուռ գնալու յուր մոտով: Նա ամբողջ մարմնով դողում էր:

«Ի՜նչ ստորություն, ի՜նչ ստորություն, կրկնեց նա մտքում, ի՜նչ արի ես, ի՜նչ արի ես»:

Արդարև նոր միայն նա հասկացավ, որ միանգամայն արժանի էր յուր ինքնասիրությանը գրեթե ուժով բացատրություն պահանջել մի մարդուց, որ այնպես տմարդի կերպով խաբել էր նրա հույսերը: Այժմ այլևս նրա համար գոյություն չուներ չքացած բախտի խնդիրը: Զարթնեց նրա մեջ յուր բոլոր զորությամբ նսեմացած ինքնասիրության խայթող զգացմունքը:

«Ի՜նչ ստորություն, ի՜նչ ստորություն», կրկնում էր նա անդադար:

Նրան թվում էր, որ ոչ միայն բժշկի առաջ ինքն իրան ստորացրեց, այլև ամենի աչքում, որ ամբողջ հասարակությունը այժմ ծաղրում է նրան, ծիծաղում է, բամբասում է: Նա չգիտեր ինչ է կատարվում յուր շուրջը, նա չէր հասկանում յուր հետ ընթացող Հալաբյանի ասածը, լսում էր միայն նրա խուլ, երերվող ձայնը: Նա մտածում էր գտնել եղբորը շուտով և աննկատելի կերպով հեռանալ երեկույթից:

«Ի՛նչ արի ես, ի՛նչ արի, տեր աստված», շշնջացին այս անգամ լսելի ձայնով նրա շրթունքները:

Ի՞նչ ասացիք, հարցրեց Հալաբյանը, լսելով նրա ասածը:

Մարիամը մի քիչ սթափվեց: Խնդրեմ եղբորս գտեք և ուղարկեցեք ինձ մոտ, ես այստեղ կսպասեմ:

Նա ուժասպառ, թուլացած նստեց ընդարձակ հյուրասենյակի մի կիսալուսավոր անկյունում:

Հալաբյանը տեղից չշարժվեց: Չկարողանալով զսպել յուր բուռն հետաքրքրությունը, նա թաքնվել էր սենյակի մի անկյունում և ականջ դրել Մարիամի խոսակցությանը բժշկի հետ: Օրիորդի մի քանի, անզգույշ կերպով բարձր արտասանված դարձվածները այլևս պարզեցին նրա համար մի չարագուշակ գաղտնիք: Ուրեմն Մարիամը սիրում է այդ երիտասարդ բժշկին, իսկ նա... արհամարհում է: Նա պատրաստ էր նույն րոպեին հարձակվել Մելիք-Բարսեղյանի վրա, տալ նրան մի խայտառակ ապտակ: Նա կատաղած էր և՛ Մարիամի դեմ: Ի՛նչ, մի երիտասարդ արհամարհում է նրան, և նա դեռ հետամուտ է լինում նրան:

Գտեք եղբորս, խնդրում եմ ձեզ, ասաց օրիորդը կրկին:

Հալաբյանը մեքենաբար շարժվեց տեղից և սկսեց աչք ածել յուր շուրջը: Երեկույթը դեռ շարունակվում էր: Պարերից հոգնած զույգերը անցուդարձ էին անում, ուրախ-ուրախ խոսակցելով: Դահլիճը կիսով չափ դատարկվել էր:

Նրան մոտեցավ մոսիո Վախվախյանը և ասաց, թե իշխան Սահարանին կանչում է: Նա ուշադրություն չդարձրեց, անցավ:

Վերջապես գտա քեզ, լսեց նա դահլիճում իշխանի ձայնը: Նո՛ւ, գնանք, քեզ են սպասում:

Ինձ ոչ ոք չպիտի սպասի, ես գործ ունեմ:

Չի կարելի, դու մերոնց խոսք ես տվել միասին ընթրելու:

Նոր միայն ամուրին հիշեց, որ արդարև, յուր գլուխը ազատելու համար, ակամա խոսք էր տվել Նիկողայոսին:

Նա ուշադրություն չդարձրեց իշխանի վրա: Նա դիմեց առաջ: Այս անգամ նրան հանդիպեց տիկին Սոփիոն:

Ախ, պարոն Հալաբյան, ես ձեզ էի պտրում, ասաց տիկինը ուրախ-ուրախ: Երևակայեցեք, կոմսուհի Նավալիխինան այնքան գովեց մեր բալը, այնքան գովեց, որ չգիտեմ... Փառք աստուծո, փառք աստուծո, շատ ուրախ եմ: Դեհ, գնանք այժմ, Նիկողայոսը սպասում է…

Երևեցան և՛ օրիորդ Նատալիան ու Ախշարումյանը, ամուրիին շրջապատեցին: Այլևս դժվար էր ազատվել նրանց ձեռքից: Սակայն նա դարձյալ ներողություն խնդրեց, հեռացավ, ասելով, որ իսկույն կվերադառնա: Նա Մարիամին չգտավ այնտեղ, ուր թողել էր: Նա վազեց այս ու այն կողմ, անցավ նախագավիթ, և այստեղ տեսավ, որ օրիորդը եղբոր թևին հենած, սանդուղքով ցած է իջնում: Նա ինքն իրան մոռացավ, և հրելով ճանապարհին պատահած հանդիսականներին, խելագարվածի պես հետևեց նրանց:

Դուք արդեն գնո՞ւմ եք:

Նա պատասխան չստացավ: Իջնելով ցած, հանդերձարանում նա մի քիչ ուշքի եկավ, շփոթվեց ինքն յուր արածից: Նա ձեռը մեկնեց Ռուբենին: Երիտասարդը գունաթափված էր, աչքերի մեջ փայլում էր մի տեսակ, նրա բարի դեմքին անհամապատասխան, կատաղություն: Պարզ էր, որ Մարիամը հաղորդել էր նրան բժշկի վարմունքը: Դողդողացող ձեռներով նա պահեց քրոջ վերարկուն, հագցրեց, առավ նրա թևը և շտապեց դեպի դուրս:

Հեգ ամուրին մնաց բևեռված յուր տեղում: Ընկճված, հուսահատված, նայեց Մարիամի հետևից: Նա ծանր և ակամա քայլերով բարձրացավ վեր: Նա զգում էր յուր շուրջը մի ամայություն, կարծես, Մարիամի գնալով նրա համար ամեն ինչ վերջացավ, կարծես, այլևս հավիտյան խորտակվեցին նրա հույսերը: Սեղանատանը չհասած, նա հանդիպեց Մելիք-Բարսեղյանին, որ խոսում էր մի հարուստ և բավական ծեր դրամատիրոջ հետ: Որքան ատելի թվաց նրան բժշկի լուրջ կերպարանքը: Նա ձգեց նրա վրա մի սպառնողական, մի սուր հայացք: Բժիշկը բարեկամաբար ժպտաց: Այդ նրան ավելի կատաղեցրեց: Նա համարում էր իրան վիրավորված, հաղթված և մինչև անգամ ստորացած մի նոր, մի տակավին անհայտ երիտասարդի առաջ: Ինչպե՞ս, նա սիրե, նա այնքան եռանդով հետամուտ լինի մի օրիորդի, որից երես է դարձնում մի ինչ-որ կիսաքաղցած բժիշկ: Էլ ո՞ւր մնացին Հալաբյանի անունը, դիրքը և հարստությանը: «Նա ծիծաղում է ինձ վրա, նա ծաղրում է ինձ, ասաց նա մտքում, ես նրան ցույց կտամ, ցույց կտամ, թե ով եմ ես»...

Երբ մտավ սեղանատուն, ամուրիին այնպես թվաց, որ ամենը հեգնաբար ժպտացին, մանավանդ Ախշարումյանը և իշխան Սահարունին: Նիկողայոսի խոնարհ հրավերով նա նստեց սեղանի մոտ, կասկածելի հայացքներ ձգելով բոլորի վրա: Ամբողջ ընթրիքի ժամանակ նա լռեց, անուշադիր թողնելով Նիկողայոսի հաճոյախոսությունները, տիկին Սոփիոյի սիրալիր ակնարկությունները, օրիորդ Նատալիայի հաղթական հայացքները, իշխան Սահարունիի սրախոսությունները և Ախշարումյանի կատակները: Նա վեր կացավ տեղից ամենից առաջ, բարևեց և պատճառ բերելով յուր գլխացավը, ներողություն խնդրեց ու հեռացավ: Նրա հետևից վազեց իշխան Սահարունին:

Սիրելիս, շշնջաց իշխանը հեգնաբար, ես հիմար չեմ:

Ի՞նչ ես ուզում ասել:

Ասում եմ, ես հիմար չեմ:

Ես այդ գիտեմ. հետո՞:

Ուրեմն իմացիր, որ գլխացավիդ պատճառը ինձ հայտնի է: Սպասիր, մի՛ շտապիր, երկու խոսք: Զգույշ կաց, հասկանո՞ւմ ես, զգույշ կաց: Քեզ նման մարդիկ չեն ընկնում, բայց ընկնելիս երկու ոտով են ընկնում թալաքի մեջ...

Խոսակցությունը տեղի ուներ նախասենյակի մի անկյունում, մոտիկ ոչ ոք չկար: Հալաբյանը ապշած նայեց իշխանի երեսին, կարդալով նրա աչքերի մեջ մի չարամիտ բան:

Իբրև բարեկամ, խորհուրդ եմ տալիս, զգույշ կաց, կրկնեց իշխանը խորհրդավոր եղանակով: Այո, զգույշ կաց, ձեռք մի՛ մեկնիլ ուրիշի պատառին, հասկանո՞ւմ ես, կարող ես մատներդ այրել և շատ վատ այրել:

Իշխան, ամոթ է, լռի՛ր:

Ես կլռեմ, բայց դու զգույշ կաց... Դե գնա, ուրիշ ասելիք չունեմ:

Իշխանը անհայտացավ: Հալաբյանը մնաց տեղն ու տեղը անշարժ, արձանացած: Այդ անորոշ խոսքերի մեջ նա զգաց շատ որոշ, շատ պարզ և շատ չարամիտ մի ակնարկություն: Նա սարսափեց:

«Ուրիշի պատառի՞ն», արտասանեց նա, մեքենաբար, ձեռով շփելով ճակատը: Նա չիմացավ, թե ինչպես ցած իջավ, ինչպես ծառան հագցրեց վերարկուն, և միայն երբ դուրս եկավ փողոց, երբ ձմեռային սառն օդը խփեց նրա ճակատին, սթափվեց փոքր-ինչ: Այն ժամանակ նրա կրծքից մի ծանր հառաչանք դուրս թռավ, և նա արտասանեց.

Ես անբախտ եմ: